

**ՆԵՐՉՆՉՈՒՄ ԵՒ  
ՅԱՅՏՆԱՏԵՍՈՒԹԻՒՆ**

**INSPIRATION AND INTUITION**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ  
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
1998**

Մեծայարգ  
Տիար Ալպէր Նորասունկեանին  
Թորոնթօ

Միրելի Ալպէր,

Հաճոյքով ընթերցեցի "Ներշնչում և Յայտնատեսութիւն" վերնագիրը կրող վերջին աշխատասիրութիւնը, որուն էջերուն մէջ հանդիպեցայ ապրումով գրուած խորհրդածութիւններու, որոնք անկասկածօրէն արգասիքն են Բու հաւատքի կեանքին: Այսպէս, երբ խորհրդածութիւն կը կատարէիր թէ ի՞նչ կը նշանակէ ներշնչուիլ իւրովի կերպով զայն կապած էիր Քրիստոսի հետ:

"Ներշնչուիլ կը նշանակէ հաղորդուիլ Յարուցեալ Քրիստոսին հետ: Կայ մեր մէջ ի Բուն մտած ներքին ոյժ մը որ կրնայ խաղաղեցնել փոթորիկը, այդ մեր հաւատքն է: Երբ հաւատքը կեանքի՝ գործօն ապրումի կը փոխակերպուի, մահը չի կրնար այդ կեանքը կաշանաւորել...!": Նոյն աշխատասիրութեանդ մէջ յատկանշական է հաւատքի մասին Բու բնորոշումը սարքեր հատուածներու մէջ, որոնցմէ մէկը կը մէջբերեմ այստեղ. "Ի՞նչ է հաւատքին իրականութիւնը: Եկեղեցի՞ է, ջէ՞նքն է, վարչակառոյցին կազմակերպութիւն: Հաւատքին իրականութիւնը ոգի՞ է, ըմբռնում, ապրում ու ծառայութիւն ա՛յն Յիսուս Քրիստոսին, որուն հոգին և ջունքը կերպարանափոխած է մեզ, ներշնչած է մեզ և դարձուցած սուրբ աշակերտներ՝ փայլելու և ճառագայթելու իբր Անոր սիրոյ, ողորմութեան և բարեգթութեան լոյսը համայն մարդկութեան":

Այս և նման բազում գեղեցիկ և իմաստալից խորհրդածութիւններով լեցուն այս աշխատասիրութիւնը հաւատացեալին հաւատքի կեանքէն ճառագայթ մըն է, որը կը ծնի աղօթքի կեանքէն:

Միրելի Ալպէր, մարդ և Աստուած փոխ-յարաբերական կապը կը պայմանաւորուի յարատե աղօթքով: Ինչպէս Քրիստոս ըսաւ Իր աշակերտներուն. "Յամենայն ժամ յղօթս կացե՛ք և մի՛ ձանձրանայցե՛ք": Մենք ունինք այն համոզումը, որ Դուք Ձեր կեանքը հաստատած էք աղօթքի կեանքին վրայ և զայն կ'ամրացնէք յարատեութեան ձգտումովը: Մեծապէս կը գնահատենք ձեր մղումը Բանգի սրտաբուխ Ձեր խօսքն ու աղօթքը կը դարձնե՛ք հոգեւոր սնունդ հաւատացելոց հոգեւոր կեանքին:

Մնամք Աղօթարար՝  
Յովնան Աբ՛. Տէրտէրեան  
Առաջնորդ Գանատահայոց

# ՆԵՐՇՆՉՈՒՄ ԵՒ ՅԱՅՏՆԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Նախաֆրիստոնեական դարաշրջանին հանճարի հիմնական գիծը ոգեշնչում կամ աստուածներու (մուսաներու) ներշնչանք կը համարուէր: «Պաթոս» յունական բառ մըն է, որ կը նշանակէ՝ տառապանք, կիրք, ներշնչում, վերելք, ոգեւորութիւն ու խանդավարութիւն: Արուեստի և գեղարուեստի մէջ "Պաթոս" տարբեր նշանակութիւններ եւս կրնայ ունենալ: Արիստոտել «Պաթոս»ը բնորոշած է որպէս մարդկային հոգւոյն յասկութիւնը՝ ձիրքը:

Յունական դիցաբանութեան մէջ ինը դիցունհի Բոյրեր (մուսաներ) կային, Զեւսի դասրեր, որոնցմէ ամէն մէկը կը հովանաւորէր արուեստի կամ գիտութեան ճիւղ մը և Ապոլոնի հետ կ'ապրէին Բաունաս, Բինդոս և Նելիկոն լեռներու մէջ: Իլիականի սկիզբը՝ ճոմերոս երեւան կու գայ իբրեւ մուսային բերանը, ու իր Ողիսականի սկիզբը կը դիմէ մուսային, խնդրելով որ ան պատմէ Ողիսեւսի արկածախնդրութիւնները: Գեղարուեստական և բանաստեղծական երանգ ունին ամէն ինչ, որ մեզ կը փոխադրեն հունաւորէն Անհունին և մարդկայինէն տիեզերական ճոգիին:

Պտղեմէոս Ստտերի ժամանակ (280 Զ.Ա.) Աղեֆսանդրիոյ մատենադարանը գիտութեան հետց դարձած էր: Անտոնիոս, երբ Պերգամոնի մատենադարանը Կղեոպատրայի նուիրեց, 200,000 գիրք կար սոյն մատենադարանին մէջ: Աղեֆսանդրիոյ մատենադարանը կը կոչուէր "միւզէ"՝ անգ. "museum", որ կը նշանակէ "մուսաներու վայր": Այժմ, 20-րդ դարուն, "միւզէ" բառը կը նշանակէ անկենդան առարկաներու ցուցադրութեան վայրը ... : Բառեր և իսկութիւններ որքա՞ն կը փոխուին երբ մարդ կ'այլաստի ու կը սնանկանայ հոգեպէս ու կը հեռացնէ ինքզինք՝ ոգեկան իսկութենէ:

Ոգեկան աշխարհը կը գտնուի ներկայ արուեստագիտութիւններու (technology) հասողութենէն դուրս և անդին: Որպէս գերագոյն Արուեստագէտ ու Արարիչ, Աստուած Իր Միածին Յիսուսի մէջ *«նկա իրեններու և բայց իրենները (Իր հոգեւորական գիտնական կոչումները) ջընտրու նեցին գլխա»* Արիստոտել ֆիզիքական մարմիններէ դուրս, կ'ընդունի անշարժ և աննիւթ էութիւն մը, որ բոլոր գոյութիւններու հիմը կը նկատէ՝ Աստուծոյ Գոյութիւնը: Սոյն Գոյութիւնը ան կը կոչէ. «Ամէն ինչ շարժող, բայց **Ինքն Անշարժ**»:

**Դիցաբանութիւնը պատկերաւոր մտածում,  
իսկ Հաւատքը պատկերաւոր յայտնութիւն է:**

մին՝ *մարդկային* մտայղացում, իսկ երկրորդը՝  
*աստուածային* շնորհ:

Ներշնչումը ներառեալ ինֆնազիտակցութիւն և հոգիի արտացոլման բարձրագոյն աստիճանն է: Հոգեկանը իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կ'իրագործուի բարձրագոյն մարդ էակներու մօտ, որոնք իրենց անձերը կը խոնարհեցնեն Տիեզերական Մտփի (Խորհուրդ խորին, անհաս անսկիզբ) պատուանդանին իրենց ազատ յօժարութեամբ: Յայտնատեսութիւնը Հոգիէն եկած ցոլացումներ, մտածողութիւններ և զգացումներ են:

Արեգակի տիեզերասփիւռ ճառագայթներէն շատ փոքր մաս մը կը հասնի մեր երկրագունտին, նոյնպէս նաեւ Աստուծոյ յայտնատեսութենէն կ'օգտուին միայն փոքր թիւով անձեր: Հոգեւոր ներշնչականութիւնը ամոքիչ Բաղբրութիւն է հաւատացեալին: Կեանքը կը ցոլափայլի և կը հրավարի ու կը խորանայ իր իմաստին մէջ երբ Սուրբ Հոգին ներշնչէ ենթական: Ներշնչուիլ կը նշանակէ հաղորդուիլ Յարուցեալ Զրիստոսին հետ: Կայ մեր մէջ ի բուն մտած ներքին ուժ մը որ կրնայ խաղաղեցնել կեանքի փոթորիկը, ասիկա մեր հաւատն է: Երբ հաւատքը կեանքի՝ գործօն ապրումի փոխակերպուի, մահը չի կրնար այդ կեանքը կալանաւորել: Այս առթիւ Պօղոս առաքեալ կ'ըսէ.

*«Ինձի համար կեանքը Զրիստոս է, իսկ մեռնիլը՝ ջան»* --Փիլ. Ա. 21: Յիսուս՝ Իր *սրբութեան* ոգեշնչեց առաքեալները: Հաւատացեալին անաղարտ միտքը Յախտենականին Մտփին մէկ ցոլքն է՝ Լոյսի ովկեանին մէկ հիւլէն:

Յայտնատեսութիւնը Ճանաչողութեան ուղղակի և անմիջական կերպն է առանց զգայարաններուն և տրամաբանութեան օգտագործումին: Հոգեւոր կոչուած ամենալսեմ հարցերը թանձրացեալ չեն, ջօջափելի և տեսանելի չեն, այլ զգալի և իմանալի միայն հոգեկան կարողութեամբ: Երկիրն ու երկնայինը, նիւթն ու նիւթեղէնը, իմանալին և պաշտելին միացնող թելը խորհրդապաշտութիւնն է:

Հայաստանի հողը, ջուրը, կարծր քարը, ջօջափելի միջավայրը, մասնաւոր հրապոյր մը ունի, Բաշողական ոյժ մը ունի հայ մարդուն համար: Հայրենի հողին այդ հմայքը, միաժամանակ զօրութիւն է, ոյժ է, որովհետեւ այդ հողը շաղախուած է, մեր նախնեաց բիւրաւոր նահատակներու և անթիւ հերոսներու արիւնով: Հողը անբացատրելի զօրութեամբ մը կը համակէ ձեր հոգին: Տեսանելի հողին ընդմէջէն՝ անտեսանելի ոյժ մըն է որ կը ցոլայ դէպի ձեզ: Անկենդան հողէն ու ջուրէն, և կարծր միջավայրէն, կը հաղորդուի կենդանի զօրութեամբ մը, որ թէեւ չի տարրալուծուիր գիտականօրէն, բայց *կ'ապրուի իմանալի զօրութեամբ*:

Ան կրնայ վերաբերիլ արտաքին աշխարհին, ուրիշ միտներու, տիեզերական ճշմարտութեանց և Աստուծոյ անմիջական յայտնութեան: Յիսուս Զրիստոս՝ Աստուծոյ մարմնացեալ՝ Ներկայութիւնն էր երկրի վրայ, իսկ այժմ Անոր ներշնչանքն է, որ կ'առնինքն ձգողական յայտնատեսութեամբ բոլոր անոնց, որոնք ունին մաքուր սրտեր: Ալֆոնս Մարի Լուի դը (Լամարթին 1790-1869) բանաստեղծ ու ֆրանսական ակադեմիայի անդամ: Իր

կրօնաշունչ բանաստեղծական ոճով կը պանծացնէ տիեզերքը որպէս  
Եկեղեցի, ու կ'ըսէ.

«Տիեզերքը տաճա՛ր է, և երկինքն է սուրբ սեղան.  
Երկինքն անոր գմբէթն է և իր աստղերն անհամար,  
Աղօտ գարդերն մըթուլթեան»:

Երաժշտութիւնը արձագանգն է տիեզերքի կարգաւորումին ու արտա-  
յայտչական Բնարեքոնութիւնը Աստուծոյ սիրոյն: Տիեզերքի յայտնաբանու-  
թիւնը նման է անվերջանալի տեսիլքի մը գոյացութեան, որ կը հոսի դէպի  
աստուածային Էութիւն: Անսպառ հեղում մը, որուն խորհրդանիշը Լոյսն է:  
Վերջնական ելակետը Աստուած Ինքն է, տիեզերքի Կենդանի Հոգին: Երբ  
մարդահնար գործիքները դադարին խոռվելէ մարդը, ա՛յն ատեն տիեզերքի  
Ջայնը պիտի թափանցէ անոր գիտակցութեան:

Գերագոյն աղօթքը լուծեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, երբ  
մարմինը լուռ է, հոգին կ'աղօթէ: Կարեւոր չէ այն, ինչ որ մե՛նք կ'ըսենք, այլ  
ինչ որ Ա՛ն մեզի կ'ըսէ և մեր միջոցով կ'ըսէ: «Մեր բոլոր բառերը պիտի  
ըլլան անիմաստ, եթէ չգան մեր ներսէն»--Մայր Թերեզա: Տիեզերքի  
իւրաքանչիւր դէպքերը ունին բազմապիսի գոյներ ու ձեւեր, զորոնք կ'ազդեն  
մարդու զգացումներուն վրայ: Արուեստագետներն ու իմաստասէրները  
բնութենէն առած են իրենց արտայայտութեան տպաւորութիւնները: Թափուն  
և սրբազան լուծիւնը որ կը կանչէ մեզմէ իւրաքանչիւրը խորհրդաբանելու  
Աստուծոյ հետ:

Քրիստոսի Մտունդը յեղաշրջեց մարդկութեան կրօնական ըմբռնումը և  
տիեզերքի աշխարհայեցողութիւնը: Յիսուս Քրիստոս ապրեցաւ որպէս կենդա-  
նի Աստուածայայտնութիւն և հայեւացումը ՍէՐ Աստուծոյ: Ստեղծա-  
գործութեան և արարչագործութեան ճանաչումն ու Աստուածայայտնութիւնը  
ը անբաժանելի բացայայտութիւններ են նոյն Արարիչ Աստուծոյ:

Սուրբ Խաչելութեան մէջ կը տեսնենք Հօր Աստուծոյ սերը հանդէպ Իր  
Որդւոյն՝ որ պատուանդանը դարձաւ տիեզերքին ու երաջխիքը մարդոց  
փրկութեան: Ծնորհիւ Խաչեցեալին, մեր հողային բնութեան հետ շաղուեցաւ  
աստուածայինը: Յարութիւնը աստուածային առատագեղ սիրոյ խորախորհուրդ  
արտայայտութիւնն է:

Տիեզերքի գաղտնիքն ու կեանքի խորհուրդը փակուած գիրքեր կը մնան  
ցարդ բոլոր սերունդներուն առջեւ: Մարդիկ եթէ յաջողին իսկ սուրալ դէպի  
Լուսինն ու Հրատը, պիտի չկարենան վերցնել բնութեան խորհրդաւոր Բօղը որ  
միայն Աստուծոյ աչքերուն ու հաւատացեալին թափանցիկ է: Դէպքերն ու  
պայմանները ինչ որ ալ եղած են անցեալին, կրօնը և հաւատքը միշտ  
շարունակած են ժողովուրդները հրապուրել ու ներշնչել, «Տիեզերքին մեծ  
**Ինչ ու**»ին պատճառաւ: զԱստուած՝ Յիսուսի ապրումին մէջ կը տեսնենք,

Անոր մէջէն կը դիտենք և Անոր միջոցով կը ճանչնանք:

Փասգալ (1623-1662) Ֆրանսացի հանճարեղ խորհող, մատենագիր և մաթեմատիկոս, տիեզերքի նկատմամբ ըսած է.

*«Այս անճու ն միջոցներու ն յա երժական,  
լուծիս նը զիս կ'անաբեկէ»:*

Ան նաեւ ըսած է. «Հաւատքը Աստուծոյ կողմէ նուէր մըն է», ոեւէ անձի, մանաւանդ անոնց՝ որոնք իրենք զիրենք կը նուիրեն Աստուծոյ, ու հաւատացեալ կը զգան:

Աստուծոյ վսեմ Ներկայութիւնն ու անգերազանցելի սրբութիւնը կ'արտացոլուի Յիսուս Քրիստոսի մէջ ու կ'ակնկալուի իւրաքանչիւր հաւատացեալէ, որ ապրի սրբակենցաղ կեանք մը: Յովհաննէս Ակրտիչ արաջիւնը եղաւ Յիսուսի մէջ աստուածայինը նշմարող: Աստուածային սիրոյ քիտմը խոնարհելով աշխարհ, ստեղծեց մարդը, նոյնպէս մարդկային կեանքը պարտ է դառնալ յառաջդիմական խոյանք մը դէպի արարչական Ակնադրիւրը՝ սիրոյ, յոյսի և հաւատքի տենչով: Քրիստոսի Մարմինն ու արիւնը ճաշակողներու հոգիներուն մէջ կ'իջնէ Ինքն աստուածային Ներկայութիւնը զօրացնելու և ներշնչելու ենթական:

Մեր Տէրը Յիսուս կ'ըսէ.

*«Մեկ որ կ'ըսէ իմ մարմինս և կ'ըմպէ իմ արիւնս՝ յա խտենական կեանք ունի. և ես վերջին օրը յարութիւն և պիտի տամ անոր. Բանի որ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է և իմ արիւնս՝ ճշմարիտ ըմպելիք: Մեկ որ կ'ըսէ իմ մարմինս և կ'ըմպէ իմ արիւնս՝ կը բնակի իմ մէջ և ես՝ անոր մէջ (մասնակցից կը դառնայ իմ կեանքիս և ես ալ իր կեանքին): Ինչպէս որ զիս զրկեց Հայրը որ կենդանի է, ես ալ կենդանի եմ Հօրմով, և ով որ կ'ըսէ զիս՝ պիտի ապրի ինձմով»--Յով. 2. 55-59:*

Ա. Հաղորդութեամբ հոգիներու միջեւ համագանգուած միութիւն մը կը ստեղծուի: Երբ աղօթքը տիրական ներկայութիւն դառնայ մեր էութեան մէջ, մեզ կ'առաջնորդէ արաւել աղօթքի՝ դէպի Աստուած: Աղօթքի աշխարհին մէջ կը շարունակենք մինչեւ այն աստն, որ իրական և անձնուրա՛ց աղօթողներ դառնանք:

Ներկայութիւն մը կայ թէ՛ մեր ջուրջը և թէ՛ մե՛ր մէջ, որուն Ձօրութեամբ թէ կը գոյատեւենք ու նաեւ յաղթական կ'ըլլանք փորձութեան դէմ: Այդ Ներկայութիւնը ամենուրեք՝ զգալի և իմանալի է, բայց աներեւոյթ և անջօջափելի Ներկայութիւն մըն է: Յախտենականութեան Ներկայութիւնը հաւատքով սկիզբ կ'առնէ անձի մը մէջ մեր շնչաւոր կեանքի ընթացքին: Ա. Հոգիին առատապարգեւ շնորհները ջատերուն համար կը դառնան կենդանի օրինակ առաքինաւեր ու կրօնաբոյր կեանքի մը և աղբիւրը ներշնչանքի: Յիսուս Քրիստոսի Ծնունդը, նոր ծնունդ մը, նոր կենցաղավարութիւն մը և

արթնութեան ներշնչանք մը կը ստեղծէ մեր էութեան մէջ: Օրինակ՝ Յարուցեալ Փրկիչը լուսածնունդ ներգործութեամբ հանդիպած էր Պօղոսի, Դամասկոսի ճամբուն վրայ, ու մելանուշ ձայնով հարցուցած, ըսելով. «Սօղո՛ւ, Սօղո՛ւ, ինչո՞ւ կը հալածես Ձիս»: Սօղոսի մէջ յայտնաբերուեցաւ նոր մարդը: Եկեղեցիին հալածիչը դարձաւ տարածիչ, ասելութիւնը՝ սէր և իշխանութիւնը՝ ծառայութիւն:

Աստուածային յայտնատեսութիւնը մարդկայնօրէն ըմբռնելի չէ: Որովհետեւ մարդիկ վարժուած են որոշ կաղապարներով տեսնել դէպքերն ու իրականութիւնները: Աստուծոյ էութիւնը միջոտ վեր պիտի մնայ մեր կերտած կաղապարներու կամ մտածելու կերպերու սահմանափակ պարունակէն:

Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը՝ միայն *երեսցած* իրականութիւնն է: Ինչո՞ւ չհաւատալ իրականութիւններու որոնք մեր հասողութենէն *դուրս*, և ըմբռնելու կարողութենէն *անդին*. Են, ու ներշնչումով իմանալի:

Աստուած հանդիպեցաւ Աբրահամի օտարութեան մէջ ու երեւցաւ Մովսէսի՝ լերան մը վրայ ու տեսնուեցաւ հետը ամայութեան մէջ ո՛չ թէ եկեղեցւոյ կամ սրբատեղիի մը մէջ: Աստուած միայն սրբատեղիներու մէջ չգտնուիր, այլ սրբատեղիի՛ կը փոխակերպէ Իր տեսակցութեան ու հանդիպումի վայրերը: Աստուծոյ յայտնատեսութիւնը չենք կրնար սահմանափակել: Յայտնատես հաւատացեալը ա՛ն է, որ կ'ըմբռնէ բարոյական և նիւթական աշխարհի յարաբերութիւնները, որոնց իմաստը անհասկնալի է, ու կը փոխանցէ զանոնք հասարակ մարդու: Բոլոր գեղարուեստներուն նպատակն է երեւելի և աներեւոյթ աշխարհը ներկայացնել *գեղեցիկ*, ձեւով՝ Աստուծո՛յ ներշնչումով: Կրօնքը արուեստի բոլոր մարգերուն մէջ դարձած է բանաստեղծութիւն, բանդակ, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ:

Արուեստագէտ մը իր պատանութեան կ'ունենայ ջրջան մը, երբ իրերուն մէջ ու իրերուն ետին ու անոնց համադրութեան մէջ կը զգայ (կը ներշնչուի) անոնցմէ դուրս ու անոնցմէ վեր խորհուրդի մը, ու կը բախէ գաղտնի դուռը հառաչելով ու գոչելով. *«Բաց մեզ Տէ՛ր զորուն սրտի իրդ»*: Ի՞նչ է սոյն հառաչանքը, եթէ ոչ ստեղծագործ վեհ ոգեւորութիւն: Մարգարէութիւնը իր հարազատ ձեւին մէջ այնքան մարդկային կարողութիւն մըն է, որքան փիլիսոփայական, գիտական ու գեղարուեստական որեւէ կարողութիւն: Ճաշակը տեսակ մը արուեստագիտական խիղճ է, որ ցոյց կու տայ մեզի գեղեցիկը, սգեղը և բարին:

Սուրբն ծնորահալի կ'երգէ.

«Տենչալուոյ տեսեամբ, սուր ինձ յագենալ Տէր Յիսուս Զրիստոս»:

Գեղարուեստը յիշեցումն ու խորհուրդն է Աստուծոյ, կրօնքը տեսիլն է Անոր բարութեան, որ կը խօսի մեր սրտին: Գեղարուեստը տենչն է Անհունին:

Հոգին կ'ուզէ գտնել գրկել իր Բաղձալին, իր Տենչալին, Անմահութեան Լոյսերուն մէջ բնակող Բարութիւնը՝ գԱստուած: Արուեստագէտը ուխտաւորն է գտնելու Կատարելութիւնը այդ անդինականէն եկող յղացումները որ է Աստուած:

Ոմանք գրականութիւնն ու գեղարուեստը ինքն իր մէջ վախճան մը կը դաւանին: Տաճար մը կամ մեհեան մը, ու հոն կը դառնան կրկին Բրամ-գործելու համար: Ճշմարիտ գեղարուեստը, Աստուծոյ **կարօ՛տն** է: Ամենէն հարագատ արուեստի լրումը կրօնն է, որոնման ու ըղձանքի վախճանը՝ աստուածճանաչումը: Կրօնքը անհաւատին խեղճուկ ուղեղով պատկերացում հնամենի բթամտութիւնը չէ՛, այլ մեր հոգիներուն պայթող կարօտով որոնումը Հոգին է:

### ***Ներշնչումը տենչն է Անհու նին:***

Ներշնչումի ճամբով մեզի կու գայ ճաշակ, վեհանձնութիւն, յաղթանակի և սիրոյ յաւերժական խորհուրդները: Դասական մեծ արուեստագէտներու մէջ մարմնացած էր ներշնչումը, գեղարուեստի և ազգային գաղափարին:

Հին Կտակարանի մէջ աստուածայայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով, կը զարգանայ Մաղմոսներու մէջ, կը յառաջդիմէ և կը բարձրանայ երկնաբարձ գազաթներ մարգարէութեանց մէջ ու գերագոյն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և զոհողութեամբ: Աստուծոյ պահանջները կը յառաջանան, օրինականէն դէպի բարոյականը, և բարոյականէն դէպի հոգեւորը: Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ անստուեր Լոյսին ցոլքը և անքիծ ճառագայթումին ծողանքն է: գԱստուած՝ Յիսուսի ապրումին մէջ կը տեսնենք, Անոր մէջէն կը դիտենք և Անոր միջոցով կը ճանչնանք: Յիսուս Քրիստոս ոչ միայն ճշմարտութեան Վարդապետ մը, այլ տիպար նմոյշ մը և **ապրող Բացատրութիւն** մըն է:

### **Ինչո՞ւ Աստուածային Յայտնութիւն:**

Յիսուս իբրեւ Որդի՛, գերագոյն Յայտնութիւնն է Արարիչ Աստուծոյ, որ կ'իրագործէ փրկութիւնը մեղքի գերութենէն և հոգեկան այլասերումէն: Այս փրկարար ազատութիւնը ձրի շնորհ մըն է բոլոր անոնց, որոնք իրենց կեանքը կը վստահին ու կը յանձնեն Քրիստոսի: Ըստ Յովհաննէս առաքեալին, Յիսուս իբր Բանն յաւիտենից, մարմնացեալ, կը յայտնէ Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը առ մարդ էակին:

Չափազանց դժուար է 20-րդ դարու Արեւմտեան կիսագունտին վրայ ապրողները հետաքրքրել, աստուածայայտնութիւն կամ ներշնչում բառով: Հզօր Ամերիկայի դրամատիրական իշխանութիւնը կուրցուցած է մարդկային

ամբողջ հասկացողութիւնը և անոր հոգեկան ըմբռնումը: Դրամապաշտութիւնն ու հեշտամոլութիւնը, մարդը ստորադասած է անասուններէն ալ ցած: Ազատ սպառողականութիւն մակդիրին ներքեւ, Արեւմուտքը կալանաւորելու վրայ է աշխարհը տնտեսական անպարտելի գաղթատիրութեամբ մը:

«Այն ինչ, որ կը կոչուի 20-րդ դարու Արեւմտեան Մշակոյթ (Թերեւս աւելի լաւ պիտի ըլլար կոչել զայն կեղծ-մշակոյթ), յոյժ աւերիչ ազդեցութիւն ունի նոր սերունդին վրայ, գլխաւորաբար այն պատճառով որ ամբողջ շեշտը կը դնէ լոկ հեշտանքի և զգայարաններու ցանկութեանց յագեցման վրայ, ու կը սպառնայ հոգեկան ու իմացական գեղեցկութիւններէ դատարկացնելու անհատին կեանքը»: Յովհաննէս առաքեալ այսպէս կը յորդորէ հաւատացեալները ու զանոնք կը զգուշացնէ ըսելով.

*«Մարմնի ցանկութիւնը, աչքին տեսածը ու նենալու ցանկութիւնը և երկրաւոր ինչքերով հպարտանալը, որոնք Հօգովէն չեն գար, այլ՝ այս աշխարհէն».*

--Ա. Յով. Բ. 16

Արդի երաժշտութիւնը դարձած է պոռոց ու պոռչտուք, գեղարուեստը՝ անիմաստ գիծ ու գոյն ու մարմնի հանդերձանքը միայն խոշորացոյցով տեսանելի... : Մինչդեռ նկարչութիւնը՝ գիծերու և գոյներու համադրութիւն մը չէ՛ միայն, այլ է՛ նաեւ փիլիսոփայութիւն, հոգեբանութիւն, հոգին ազնուացնելու և հարստացնելու գիտութիւն:

Մարդկային աստուածապարգեւ բերուն միտքը, հզօր կամքը և բազմարդիւն ճիգերը թառամած ու թոռամած են անյագ դրամասիրութեամբ ու վսեմ մտածողութիւնը կը սլփտայ միայն ֆութպոլի ու կարգ մը անիմաստ խաղարկութիւններու խաւար ու խառնակ լաբիւրինթոսներուն մէջ: Խաղարկութենէ յետոյ կը մեկնին կուշտ փորով սակայն դատարկ միտքով... : Նորամոլութեան քայքայող հոսանք մը կայ որ մոլեգնաբար կ'ուզէ ջնջել և փճացնել ամէն գեղեցկութիւն և սրբութիւն: Հակառակ չարին նենգամիտ խաբէութեան, ու մեղքի խաւարակուռ և անկերպարան աշխարհին մէջ, տակաւին կը ցոլափայլի աստուածային սիրոյ յայտնատեսութիւնն ու Զրիստոսի փրկարար ջնորհը, որ կ'ըսէ. **«Եկէ՛ք Ինձի»:**

"Ինչո՞ւ աստուածայայտնութիւն" հարցումը կարելի է նաեւ պատասխանել սապէս՝ հնարաւո՞ր է արեւին որ իր ջողերը չսփռէ կենդանարար ճաճանչներով կեանք և աճում պարգեւելու աշխարհի: Կարելի՞ է բարեգութ ու սիրող ծնողք մը չյարաբերի ու անհաղորդ մնայ հանդէպ իր զաւակներուն: Նոյնպէս ալ ողորմած Աստուած կ'ուզէ յարաբերիլ, հաղորդուիլ ու դատարկալէ իր մարդ արարածը մինչեւ որ ան հասնի չափահասութեան:

Աստուծոյ յայտնատեսութեան ու ներջնչումի՛ն նպատակը, հասցնել է մարդը կատարելութեան: Յիսուս ըսաւ.

**«Կատարեալ եղէք ինչպէս ձեր  
Երկնաւոր Հայրը կատարեալ է»:**

Ան չըսաւ. «Եկէ՛ք ինձի ու Ե՛ս կատարեալ պիտի դարձնեմ ձեզ»:  
Կատարելութեան հասնիլը, մե՛ր պարտականութիւնն է, Աստուծոյ բաժինը՝  
միայն օժանդակել է: Քրիստոսի մեղանուջ ձայնը (Եկէ՛ք ինձի)ն կը հնչէ մեղմ  
ու բաղք: Այդ ձայնը հաղորդական և գրաւիչ ուժ մը ունի, նորոգելու  
մեղաւորներուն տառապալից կեանքը և սիրովելու համար տանջուած սրտերը:  
Ի՞նչ փառք ու փրկութիւն, բունել ու չթողուլ աստուածային բարերար Ձեռքը,  
այդ հրաշագործ ու ամենասուրբ Ձեռքը, որ գթառատ՝ կու տայ ու կը մոռնայ,  
կը փրկէ ու կը գոհանայ, կը նախատուի ու կը ներէ, և ցոյց տրուած  
ապերախտութիւններու հակառակ՝ չի գրկեր մեզ Իր աստուածային  
շնորհներէն ու պաշտպանութենէն: Մարդու ինքնակատարելագործման ուղին  
կ'անցնի սիրոյ մաքրագոյնի Բուրայէն:

Փառքն ու երանութիւնը այն բարձունքն է, ուր բառերն ու խօսքերը կը  
դադրին և մարդ հոգեկան յափշտակութեան մէջ կը տեսնէ զԱստուած ու կը  
ճանչնայ ինքզինք: Ասիկա Աստուծոյ փառաւորութեան վերացական հասկա-  
ցողութիւնը չէ պարզապէս, այլ կը նշէ Աստուծոյ փառաւոր ներկայութիւնը, և  
յաճախ այդ ներկայութեան տեսանելի կամ զգալի մէկ արտայայտութիւնը՝  
երեւումը կամ յայտնութիւնը Ղուկ. Բ.9, Բ. Պետ. Ա. 17, Յայտ. ԻԱ. 23:

Ստեղծագործութեան և արարչագործութեան ճանաչումն ու Աստուա-  
ծայայտնութիւնը անբաժանելի բացայայտութիւններ են նոյն Արարիչ  
Աստուծոյն: Աստուած ստեղծեց ամէն ինչ, ոչ թէ աւելցնելու համար Իր  
փառքը, այլ ցոյց տալու ու յարաբերելու համար Իր արարչութեան հետ: Մերը  
արտայայտութիւն է: Աստուած փաստերու և պատճարներու օղակաւորումով  
գտանելի ճշմարտութիւն մը չէ, այլ յայտնատեսութեամբ և հաւատքով:

Մովսէսի օրէնսդրութիւնը «կրօնա-բարենորոգչական» շարժում մըն էր,  
որու նպատակը Աստուծոյ կամֆին գործօն կիրառումը պիտի դառնար  
առօրեայ կեանքին մէջ: Մինչդեռ Օրէնքին բացարձակ և տառացի գործա-  
դրութիւնը, Փարիսեցի հրեաներուն կողմէ, հասկցուեցաւ իբրեւ փրկութեան  
ճանապարհ. այնքան, որ մարդ դարձաւ օրէնքին ստրուկը: Քրիստոսի առ  
աճելութիւնը եղաւ այն **նորայայտ** լուսաւորումը, որ պիտի ազատագրէր  
մարդը իր դարաւոր շեղումէն:

Մարդ արարածը չի փոխեր իր պատմական կենցաղավարութիւնը  
տրամաբանական կամ դատողական իմացումով: Մարդ կարիքը ունի երկնա-  
նափ յայտնութիւններու: Այս երկնածնունդ յայտնատեսութիւնը իրագոր-  
ծուեցաւ Յիսուս Քրիստոսի ապրումով, Բարոզչութեամբ ու Անոր անձնագոհ  
Խաչելութեամբ: Մարդկութիւնը սակայն չըմբռնեց: Միայն Քրիստոսի  
հրաշափառ Յարութիւնն էր, որ յեղաշրջեց մարդկային տեսանելիութիւնը և  
թմրած ու փարիսեցիացած միտքեր սկսան հասկնալ Նազովրեցի Մարգարէին

անձնամատոյց ապրումը, ծիածանի նման լուսայորդ Բարոզութիւնը և Իր Խաչելութեան ընդմէջէն ցոյց տուած Հօր Աստուծոյ սիրայորդ Դիմագիծը:

Կեանքի բոլոր ոլորտները թափանցող այս ներշնչում յայտնատեսութիւնը դարձաւ այն գօրոյթը որ յեղաշրջեց ոչ միայն Հրեաստանը, այլ ամբողջ հեթանոս աշխարհը ու տապալեց հռոմէական գօրութիւնը, որ խաչած էր Զինք Բողարկելու համար ճշմարտութիւնն ու իրաւունքը: Այսօր ալ, աշխարհ կը խաչէ՝ ու կը թաղէ՝ ճշմարտութիւնը, խոնարհութիւնը, ծառայասիրութիւնը և անձնագոհութիւնը, բայց ո՛չ երկար ժամանակ: Գոհարտութիւնը փաստարկութեան աջակցութեան կարիքը չունի: Ան ինքնաբաւ ու ինքնագօր է յաղթել ու տապալել զինք խաչողները ու **յօնել** գերեզմանէն: Մեռելոց յարութիւնն ու անոր լուսաճաճանչ Ռահվիրան երկու հազար դարեր կ'աւետարանէ՝ ու Իր անհամար նահատակներու և մարտիրոսներու արեամբ կը յայտնացուցանէ ճամբա՛ն յաւիտենական կեանքի, որ շնորհ մըն է իւրաքանչիւր հաւատացողին:

**Ի ն չ ո՞ւ և հ աւ ա տ ա լ:** Հաւատալը՝ հաւատն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Հաւատալոյս հոգին երբեք պիտի չընդունի պարտութիւնը: Հաւատալու համար միայն միտք չի բաւեր, այլ յայտնատեսութիւնն ալ հարկաւոր է: Անշո՛ւշտ թէ հաւատքի կարիքը կայ թէ Աստուած կայ. նոյնպէս հաւատալու պէտքը կայ, թէ **Ան գոյ չէ:** Հաւատալու փորձառութիւնը ոչ միայն հակասող չէ բանականութեան, այլ կը գլէ կ'անցնի գերադասելով զայն: Հաւատալու գօրոյթը, ո՛չ թէ *հաւատքի* մէջն է, այլ չհաւատալո՛ւ ազատութիւնը ու նենալով հանդերձ, *հաւատալո՛ւն* մէջն է:

Աստուծոյ չհաւատացող հոգին կրնայ ըսուիլ թէ գոյութիւն իսկ չէ առած դեռ: Ան կը նմանի ներարգանդեան վիճակի մէջ գտնուող մանկիկի մը, ինչպէս որ չծնած մանկիկը արգանդին մէջ անհասկնալի, շփոթ ու խաւար գոյութիւն մը ունի և ինքնութիւնը չէ ստացած, այնպէս է նաեւ անհաւատ հոգին: Երբ հոգի մը անհաւատ մեռնի, կրնայ ըսուիլ թէ վիժեցաւ, այսինքն չծնած մեռաւ: Եկեղեցին կանգնած է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժէքները, սէր, անձնուրացութիւն, գոհաբերութիւն և ծառայասիրութիւն:

Ներսէն դէպի դուրս աճումն է կեանքը. ու հաւատքը Լոյս մըն է շնորհք մըն է Ս. Հոգիէն տրուած մարդ էակին: Հաւատքին ամենէն փրկարար արդիւնքներէն մին, կեանքը հասկնալի՝ ընել է մարդուն: Թորգոմ Արք.

Գուշակեան ըսած է. *«Ճշմարիտ հաւատքը այն է, որ կոյր չէ բնաւ և հեռի է կուրացուցիչ ըլլալէ: Ան կը ծնի Հոգեկան Լոյսէ մը, չպատճառաբանող բայց անտարկելի ներքին ապացուցութենէն՝ որ հզօր Գիտակցութիւնն է ինքի նին: Այս է իր ճշմարիտ նկարագիրը»*. Հաւատքին խտացեալ բացատրութիւնը սա է.

**Հաւատքը մարդուն մէջ աստուածային իր  
պատկերին վերակենդանացումն է:**

Ազատ երկրի մը մէջ երբ որեւէ նիւթի կամ պատճառի մը համար ընտրապայքար մը կայ, բոլոր հեռատեսիլները ու ռատիոկայարանները այդ մասին ակնարկութիւններ ու մեկնաբանութիւններ կու տան: Հեռասփռումներու մէջ զգալի կ'ըլլայ անձի մը նիւթական ջահը կամ կուսակցութեան խաբէրայութիւնը: Ինչպէս որ Բաղաբախան վերոյիջեալ պայքարամարտի ընթացքին ջանք կը կատարուի հակառակ կուսակցութեան կողմէ լռեցնել ճշմարտութեան և իրաւունքի ձայնը, նոյնպէս ալ չարը ճիգ կ'ընէ կասկածի ենթարկել Յիսուսի Բաջալերանները: Սակայն Զրիստոսի մեղանոյժ Ջայնը կ'ելլէ հարազատ Արտէ մը դպչելու համար յօժարո՞ղ սրտերու: Դժուար է լսել երկինքէն եկած ձայնը (ներշնչումը) երբ մեր ականջները լեցուն են աշխարհով և Սատանային սուտ փափուհներով՝ փառասիրութեամբ:

Կա՛յ հոգեկան աշխարհ մը անտեսանելի, բայց **իմանալի** և ներհայեցողական, ուր տեղի կ'ունենայ տիտանային պայքարամարտ: Հակակրօն յեղափոխականներ ու ակադեմականներ, Բրիստոնէական կրօնին դէմ մղուած պայքարին մէջ, առժամեայ յաջողութիւններ կրնան արձանագրել, բայց երբեք կարողացած չեն ժողովուրդներու սրտին մէջէն արմատախիլ ընել կրօնի զգացումը և հաւատքի մարմաջը: Ինչո՞ւ: Որովհետեւ Զրիստոնէութիւնը ձեւ ու մարմին, իմաստ ու նուիրում կու տայ հաւատքի պայքարին:

Համայնավարութիւնը իր 80 տարուայ պողպատէ սպառազինութեամբ չկրցաւ նուաճել անզէն ժողովուրդին հաւատքը: «75 տարի անաստուածութենէ ետք, Աստուած ներկայ է Ռուսիոյ մէջ և համայնավարութիւնը մեռած է վերջնականապէս»--Ռիչըրտ Նիքսըն: Համայնավարութիւնը ոչ միայն սնանկ երկիր մը թողուց իր ետին, այլ նաեւ հիւանդոտ հոգիներ: Զանի՛ Բանի համայնավար պատասխանատուներ իրենց զաւակները մկրտել տուած էին գաղտնաբար:

Հաւատացեալ հոգեւոր գործիչ մը, Աստուծոյ Ջայնին մէջէն, կը լսէ աղաղակը իր ցեղին ու կարիքը իր ազգին: Մեսրոպ Մաջսոց 384-ին ներքին մղումով մը կը դառնայ վանական: Որպէս կրօնաւոր վանական մը աստուածային ներշնչմամբ ան կը դառնայ Հայ գիրերու հնարիչը և հիմը կը դնէ հայ դպրութեան և հայ գրականութեան: Պատմական այս դէպքին իրագործումը ո՛չ պատահականութիւն էր ու ո՛չ ալ դիպում, այլ աստուածային առաջնորդութիւն և յայտնութիւն: Հայ ազգը իր հաւատարմութեան ու անթիւ նահատակներուն համար, շնորհիք գտած էր աստուածային ծրագրին մէջ դառնալ Զրիստոսի անմար Ջահը Կովկասեան խաւար ցամաքամասին: Փոքր Ասիոյ բոլոր յունախօս ազգերն ու ցեղերը կորսնցուցին իրենց Բրիստոնէական հաւատքը ու դարձան իսլամ, բայց ո՛չ երբեք հայը իր Ա. Էջմիածինով:

Հայ ճակատագրին մէջ դառնագոյնը այն է, որ հայուն անծանօթ կը

մնայ ... հայր: Հայր ինձ գին՝ չի ճանչնար, հոգիով հոգօր, հաւատով հարուստ ու մտով հանճարեղ ցեղը: Հայուն համար հաւատը գործող հրաքուլս մըն է և ո՛չ թէ մարած մոխիրի խառնարան մը:

Հաւատը, մարդու հինգ զգայարաններէն և տրամախոհական կարողութիւններէն վեր, տեսակ մը *կենցեցողոյ* զգայարան մըն է՝ հոգեկան յայտնատեսութիւն: Ան բարդ երեսոյթ մըն է, որուն մէջ իմացականը, կամայինը և զգացմունքայինը գոյութիւն ունին իւրապատուկ ներդաշնակութեամբ: Հաւատի այդ վեցերորդ զգայարանը, մահը արհամարհելու քաջութիւն տուող մարտիրոսներու հաւատն է: Հաւատը, կամֆին այն յօժարութիւնն է որուն մէջ, կամ միջոցաւ, բանականութիւնը կը հասնի գերացնծութեան որ իրմէ աւելի բարձր է և անդին:

Հաւատը մարդոց մէջ տեսանելի կը դառնայ՝ երբ դեմքերու վրայ կը շողայ շարժումներու մէջ կը խլրտայ ու անձը կը դառնայ հաւատատես: «Ես»ի և փառամոլութեան հակադրութիւնը՝ հաւատի՛ աշխարհն է, գաղափարականի և բարոյական գեղեցկութեան՝ աշխարհը: Լուսինէ Զափարեան, շնորհիւ իր ջերմեռանդ հաւատին և սիրոյն, եկեղեցական երածջութիւնը քեմ փոխադրեց:

Երբեմն այնպէս կը կարծենք, թէ Աստուած անկարող է չարը կամ տառապանքը արգիլել: Միայն յայտնատես հաւատն է, որ կրնայ ըմբռնել և թափանցել ամենակալ Աստուծոյ *ամբողջատիրական* խորհուրդ զօրութեան: Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Միհէլ Անճելօ իր վերջին տարիներուն սկսաւ հաւատալ թէ հաւատն է որ պիտի արդարացնէ մարդը, Զրիստոսի Խաչելութիւնն է գերագոյն փրկութեան միջոցը (շնորհը):

Ինչպէս նախապէս պարզեցինք, "ներշնչումը" աստուածային սփռում մը, ճարագայթում մըն է դէպի համայն տիեզերք: Պատճա՞րը, որովհետեւ մարդ կը փնտռէ իր Արարիչը ամբողջ պատմութեան ընթացքին: Պատմութեան ամբողջ ընթացքին մարդ փնտրած է զԱստուած հոգ չէ թէ երկդիմիօրէն, ա՛յս պատճառաւ մարդ կոչուած է *կրօնամաս* էակ--Գործք ԺԷ. 26-28: Հեթանոսութեան մէջ՝ փիլիսոփան էր կատարեալը, **բանականութեան** թելադրութեամբ գծուած ուղին, իսկ Զրիստոսնութեան մէջ *«Զերբնական»* հաւատով և սիրով լեցուած (Բարի Մամարացին):

Յիսուս չփիլիսոփայեց չարչարանքի, խաչի և մահուան մասին, այլ *ապրեցա՛ւ*, կրեց ու արտայայտեց զանոնք: Բոլոր դարերու փիլիսոփայական միտքը զբաղուած էր հոգեկանի հարցով: Աւետարանը փիլիսոփայական դրութիւն մը չէ, այլ **«ՃԱՄԲԱ՛Ն»** դէպի Աստուած:

### **Ինչո՞ւ ներշնչուիլ**

Զրիստոնէական հաւատը, հողաշէն մարդ արարածը, վերմդող գերզգայուն զօրութիւնն է: Մարդ արարածը թէեւ կաւեղէն ու նիւթեղէն էակ մըն է, սակայն ան իր մէջ ունի՝ նիւթեղէնը գերադասող իսկութիւն մը, զոր

զինք զանազանած է անբան անասուններէն: Դարաւոր պատմութիւնը ապացոյց է այս դէպք իրողութեան: Ակսեալ Բարայրներու պատկերագրութեամբ, մարդ արարածը փոխանցած է իր որոնող հոգւոյն շարունակական հետազօտութիւնը մինչեւ այսօր:

Ան փորձած է հոգեհմայութիւն, կախարդութիւն և մոգութիւն: Պաշտած է կրակը, ջուրին վազքը, ծառերու աճումը, մարդկային սերնդագործութիւնն ու անոր բեղմնաւորութիւնը: Երբ չէ կրցած հասնիլ իր հոգւոյն յագուրդ սուող ճշմարտութեան և իսկութեան, կանգնած է բազին մը ու անուանած զայն **"ԱՆՍԱՆՕԹ ԱՍՏՈՒԱԾ"**:

Արարիչ Աստուած, անճառ Զարցրութիւն, անհանգրուան, անսկիզբ և անվախճան Բարութիւն, որ անմատչելիօրէն հեռաւոր և անընդմիջելիօրէն մերձաւոր է: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան բացատրել Զինք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Զինք:

Առանց Աստուծոյ ոչինչ *կրնայ*, ընել մարդ, բայց առանց մարդուն ոչինչ *կ'ըզէ* ընել Աստուած: Մարդ արարածը Աստուծոյ լծակցութեամբ կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ: Ծնորհքը արժանիքը, կատարումը, իրագործումը Աստուծոյ կը պատկանին: Հետեւաբար դարերու լրումին ու արարչական չափահասութեան, Աստուածայայտնութիւնը դադրեցաւ իմաստասիրական տեսութիւն մը ըլլալէ ու դարձաւ Մարդեղութիւն Յիսուս Բրիստոսի Անձնաւորութեամբ, Անոր ապրումով ու տեսանելիութեամբ: Յովհաննէս առաքեալ որ անձամբ ներկայ եղած էր սոյն Գերբնական Իսկութեան ու աչքով ականատես ու ձեռքով շօշափած էր իր Տէրը, կ'ըսէ.

*«Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք և մեր ձեռքերով ջօշափեցինք Որդին, Բաւը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք և կը վկայենք, ձեզի պատմելով ևնոր մասին, այսինքն՝ յախտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր և այժմ մեզի յայտնուեցաւ...»*-Ա. Յով. Ա. 1-2:

Հոգիի բարձրագոյն շարժումները յղացումներ են ծածկուած սրբազան Բօղի տակ, որ կ'առաջնորդեն ենթական ո՛չ թէ դէպի յաւիտենական անծանօթը, այլ դէպի Աստուած: Կրօնական փորձառութիւնը, Ս. Օգոստինոսի համար, եղած է անձնական յարաբերութիւն մը և արդես մը Աստուծոյ հետ: Ան ըսած է. *«Մեր հոգիները հանգիստ չունին, մինչեւ որ անոնք հանգչին Աստուծոյ Հոգւոյն մէջ»*: Գարեգին Ա. Կաթողիկոս ըսած է. *«Հոգիին հաւատացողը, հոգիով ապրող, հոգեկան արժէքներ ստեղծող և զանոնք յարգել գիտցող ազգը գերեզման չունի...»*

Յիսուս Բրիստոս, որուն մէջ միացած էր աստուածայինն ու մարդկայինը ըսաւ.

*«Ձեռք աղօթքի աշխարհին համար, այլ անոնց համար որ դուս ինձի*

տախր, որովհետև անո՛ւմ քեզի կը պատկանին: ինչ որ իմս է՝ այդ քոյորը քուկը է, և ինչ որ քուկը է՝ ասիկա իմս է, և անո՛ւմ զիս փառաբերեցին»:

«Ձեռ խնդրեր որ զանո՛ւմ աշխարհէ վերցնես, այլ՝ զանո՛ւմ Տարչն պահես»:

«Կ'աղօթեմ որ անո՛ւմ քոյորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դու և, ո՛վ Հայր, իմ մէջս ես և ես քու մէջդ, այնպէս ալ անո՛ւմ մեր մէջ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դու ն որկեցիր զիս»:

«Քեզ ճանչցուցի անոնց և պիտի ջարուսակեմ ճանչցնել, որպէսզի անոնց մէջ ըլլայ այն սէրը որով զիս սիրեցիր և ես ըլլամ անոնց մէջ»:

--Յով. ԺԷ. գլուխէն:

Աստուածային ներշնչումի գերագոյն նպատակը՝ միանա՛լ և նմանի՛լ է Աստուծոյ, որովհետև "աստուածային" էտարրի մասնիկ մը կայ մէն մի մարդու մէջ և կը կարօտի մշակման:

### **Աղօթք Աբ. Փրանկիսկոս Ասիզացոյ**

Տէ՛ր,

Դարձուր ինձ Քու խաղաղութեանդ գործիքը,

Որ սէր բերեմ հոն՝ ուր ատելութիւն կայ,

Որ հաշտութիւն բերեմ հոն՝ ուր վիրաւորանք կայ,

Որ միութիւն բերեմ հոն՝ ուր հակառակութիւն կայ,

Որ հաւատ բերեմ հոն՝ ուր կը տանջէ տարակոյսը,

Որ ճշմարտութիւն բերեմ հոն՝ ուր կ'իջիւէ սխալը,

Որ յոյս բերեմ հոն՝ ուր կը սպառնայ յուսահատութիւնը,

Որ ուրախութիւն բերեմ հոն՝ ուր կը ջատնայ տխրութիւնը,

Որ լոյս բերեմ հոն՝ ուր կը թագաւորէ խաւարը:

Տէ՛ր,

Օգնէ ինձի, որ չունենամ կարիքը ու չխնդրեմ

մխիթարուիլ այլ՝ մխիթարել

հասկցուիլ այլ՝ հասկնալ

սիրուիլ այլ՝ սիրել:

Որովհետեւ՝

Ով որ կու տայ՝ կը ստանայ,

Ով որ կը ներէ՝ անոր պիտի ներուի,

Ով որ կը մեռնի՝ պիտի ծնի աւիտենական կեանքին

համար:

**Ամէն:**

# Ն Ե Ր Ձ Ն Չ Ո Ւ Մ Մ Ա Ս Ա .

Մարդ արարածը կը ներշնչուի թէ՛ տեսանելի ու թէ՛ շօշափելի գեղեցկութիւններէ և թէ՛ անտեսանելի ու աննիւթական հրապոյրներէ և գրաւչութիւններէ, որոնք կը թրթռացնեն իր զգացումները կամ զգայնութիւնը:

Անասունները չունին ներշնչում: Անոնք ունին միայն անօթութիւն, ծարաւ և ֆիզիքական՝ մարսողական և սերնդագործական պահանջք: Ներշնչումը՝ մտածողական և իմացողական տարածութեան արտայայտչական յատկանիշն է: Ներշնչումը հոգեկան վիճակն է այն մարդուն, որ կը գտնուի գերբնական ուժի մը ազդեցութեան ներքեւ՝ Բարի՛ կամ չար:

Ներշնչման աղբիւր եղած է բնութիւնը՝ տիեզերքը որ կը կրէ իր ձեղինակին զանգուածային զօրութիւնը: Որովհետեւ երկիրը ձուլուած է երկինքին հետ, ներշնչումի անհուն ջղաբշով մը: Մակայն ներշնչման առաւելագոյն ազդակը Աստուածաշունչ Մատեանն է ու անոր Ակնաղբիւրը եղող Աստուած: Ան՝ Իր գագաթնակէտային իմաստով ամենէն փառապանծն է: Անոր ներշնչող փառապսակը Քրիստոսի Մարդեղացեալ ապրումն է, որ կը ներշնչէ Անոր գեղեցկագոյն Ձեռակերտը՝ մարդ արարածը:

Ներշնչումը ստացական է: Անիկա կու գայ Հոգիի անծանօթ ալիքներէն, որուն մարդիկ ներշնչում կամ հաւատք կ'անուանեն: Գեղարուեստի և ճարտարութեան ստեղծագործութիւնները հին յոյները կը վերագրէին *մուսանէրու* ներշնչման, որոնց օգնութիւնը կը խնդրէին գործի ձեռնարկելէ առաջ:

Հոմերոս՝ իր Ոդիսականի սկիզբը կը դիմէ մուսային, խնդրելով որ ան պատմէ Ոդիսեւսին արկածախնդրութիւնները: Անգլերէն "museum" բառը կը նշանակէ մուսաներու "աթոռ"ը կամ խորանը ուր մարդիկ կ'երթան խորհրդածելու, ուսանելու և ներշնչուելու: Մարդկային էակն ալ ունի ներհոգեկան աթոռ մը, խորան մը որ իր հոգւոյն սրբարանն է, եւրանը դէպի Արեւայութիւն՝ աստուածային գիտակցութիւն: Ո՛չ ներկայ իմաստով Բարաջէն թանգարան մը:

Յաճախ ճարտարապետութիւններ՝ առարկայացած պատկերներն են ներքին բանաստեղծութեան և մտատեսութեան:

Մեսրոպ Մաշտոց՝ սրբակենցաղ կրօնաւորը, մուսայէն չէ՛ որ ներշնչում կը հայցէ, այլ ներահայեցողութեամբ և աղօթքի ներամփոփման պահերուն, երկիւղած հաւատքով և յուզումնախառն զգացումներով գրախօսութեան *այբբենագիտք* (տառերը) կը խնդրէ Աստուծմէ, ոչ թէ դիւանագիտական խաբէութիւններ կամ գեհեմալառ տողեր շարադրելու, այլ աստուածախօս

Աւետարանները և աստուածականք երաժշտութիւնները թարգմանելու համար:

Աստուածային ներշնչումը կ'առաջնորդէ մարդը գաղափարաբանական գօտեպնդումի, ներքին զօրացումի, հաւատքի ամրապնդումի և անմահութեան յոյսի ծաղկումին: Հաւատքը համաշխարհային երեւոյթ մըն է, ներքին զգացում մը՝ թափուն խորհուրդը Աստուծոյ:

Կեանքի խռովայոյզ այս հանգրուանին ինչպէ՞ս ներշնչուիլ և ինչպէ՞ս վերակենդանանալ տեսնելու համար ապագայի նոր արջալոյսները:

Ճառագայթող յաւերժաբոյր Ճշմարտութիւն Յիսուս, Իր աջակերտներուն ներշնչեց յոյս, ներհզօրութիւն, պայծառ ապագայի ակնկալութիւն և հաւատք: Բարի Հովիւը, Նազովրեցի Յիսուս՝ Արինգահար մըն է: Անոր հովուական սրինգը *պարզ* է, անուշ և մեղմ կը հնչէ: Խաղաղութիւնը Յիսուսի ներքին ճշմարտութիւնն է, որ երկինքի խորութիւններէն կը ջարուսակէ հնչել Բաղք սրինգի մը նման և իրարու մօտ կը բերէ հաւատացեալ և անկեղծ հոգիները: Հօր անմահին Մնունդ՝ Յիսուս սրինգով կը պատմէ Իր երազը, տեսիլքը և առաքելութիւնը: Ան կրնայ փոխել մեր *գաւազանը* (զէնքը, ատելութիւնը, վրէժխնդրութիւնը և փառասիրութիւնը) սրինգի և մեր սուլոց ֆննարասութիւնները՝ սրտածաղկեալ և հմայիչ ֆնարի:

Ներշնչուելու համար փոխակերպուելու ենք համեստ եղէգի--ո՛չ թէ լեցուն գաւազանի--զերծ անձնասիրութենէ, ատելութենէ, և վրէժխնդրութենէ *դատարկուած* սպասողական դիրքի մը մէջ: Կեանքը համակ սպասում մը և յուսադրանք մըն է: Հաւատքով զինուած ակնդէտ սպասելու ենք երկնային Արնգահարին, որպէսզի գործածէ՛ մեզ:

«Տէր Աստուած գետնին հողէն ջինեց մարդը և անոր ոնգունքներէն կենդանութեան ջունչ փչեց ու մարդը կենդանի հոգի եղաւ»--Մննդ. Բ. 7:

Անճառելի և *հաղորդակից* Աստուած ոչինչէն չստեղծեց մարդը, այլ **“հողէն ջինեց”** գայն, ինչպէս եղէզ մը, որ *հողէ՛ն* կը բուսնի: Աներեւոյթներու Յօրինիչը երբ հողէն ջինեց մարդ արարածը, մարդ տարբերութիւն մը չունէր անասուններէն: Տէր Աստուած Իր ծունչէն ու Հոգիէն կայծ մը երբ փչեց նորակառոյց մարդ-եղէգին մէջ, մարդ էակ փոխակերպուեցաւ “կենդանի հոգիի”: Իսկ երբ Անճառ Զաղքութիւնը մարդ էակին վրայ Իր ծունչէն, թափանցումէն, դատումէն և կեանքէն փչեց, մարդ ստացաւ երկնաւորին, Բարձրեալին և Ամենակարողին կերպարը:

Հին Կտակարանին մէջ Աստուած եղած էր ծունչ, եղած էր Ջայն, եղած էր Երեւում. Զրիստոսով Ան եղաւ Մարմին: Անկապտելի Մարդեղեալը Իր անպարտելի Յարութենէն յետոյ *Յարութեա՛ն* ջունչը փչեց Իր հետեւորդներուն և ըսաւ.

**«Առէ՛ք Սուրբ Հոգին»--Յով. Ի.23:**

Առաջին ծունչը և կեանքի ծնչաղբիւրը Աստուած Ի՛նքն է, որ կը խօսի դարերու ջունչով: Աւետարան մագաղաթներու, քանդակներու, մանրանկարներու, խաչքարերու յուշաղբիւրներու և եկեղեցիներու վրայ կենդանի ջունչով փորագրուած, տիեզերական Մէրը յաւերժօրէն կը խօսի մահուր և անքիժ հոգիներուն:

Անթոնիթեան ջուշանաբոյր Սուրբ Հոգին կը փնտռէ *մահուր* ու նուիրեալ հոգիներ: Հոգիներ որոնք պարպուած են անձնասիրութենէ, ասելութենէ, փառասիրութենէ և վրէժխնդրութենէ: Հոգիներ որոնք նուիրուած են սպասաւորելու, նուիրուելու ու զոհուելու կատարելու համար Աստուծոյ կամքը: Առանց Աստուծոյ ոչինչ **կրնայ** ընել մարդ, բայց առանց մարդուն ոչինչ **կ'ուզէ** ընել Աստուած: Մին *կարենալու* խնդիր է, իսկ միւսը *կամենալու*:

Մարդեղութեան փրկարար Զօրութիւնը երկնքի խորութիւններէն կը շարունակէ ձայնել որպէս ներշնչումի Աղբիւր ու կ'ըսէ.

**«Ահաւասիկ ես դրան առջեւ եմ և կը բախեմ:  
Եթէ մէկը ականջ դնէ իմ ձայնիս ու բանայ  
դուռը՝ պիտի մտնեմ անոր բով»:**

Մարդկային ողբերգութեան սրաման լման ապրող Յիսուս Բրիստոս կ'ուզէ փչել Իր Հոգին, Իր ծունչը: Ան կ'ուզէ սրնգահարել՝ ներշնչել՝ քեզ և զիս Ի՛ր Ոգիով ու մեզ զինել Սուրբ Հոգիով: Հաւատքը պարտի դառնալ գործօն, որակական և ոգեկան ներկայութիւնը անձնամատոյց Սրնգահարին:

Ոգեկան ներշնչումի աշխարհը կը գտնուի մեր արուեստագիտութիւններու հասողութենէն դուրս և անդին: Ի՞նչ է հաւատքին իրականութիւնը: Եկեղեցի՞ է, ջէ՞նք է, վարչակարգային կազմակերպութի՞ւն: Հաւատքին իրականութիւնը ոգի՞ է, ըմբոնո՞ւմ, ապրում ու ծառայութիւն ա՛յն Յիսուս Փրկչին, Որուն Հոգին և ծունչը կերպարանափոխած է մեզ, ներշնչած է մեզ և դարձուցած սուրբ աջակերտներ՝ փայլելու և ճառագայթելու իբր Անոր սիրոյ, ողորմութեան և բարեգթութեան լոյսը համայն մարդկութեան:

**Փետ. 12, 1994**  
**Թորոնթօ**

# Ն Ե Ր Շ Ն Չ Ո Ւ Մ ՄԱՍ-- Բ

Կրօնֆի և արուեստի տարածֆին մէջ վեհագոյն և ծայրագոյն հոգեյղացումները կը վերագրուին արտակարգ և բացառիկ մտային և հոգեկան յափշտակութիւններու, որոնց արդիւնքը կ'ըլլայ յուզական և յայտնաբանական, և թոյլչֆ կու տան երածջտական, Ճարտարապետական գեղակառոյց տաճարներու և հոգեյոյզ գեղանկարչութիւններու:

"Ներշնչում" բառը կրօնական հասկացողութեան մէջ անբաժանելիօրէն կապուած և հիւսուած է աստուածային Հոգիի միջամտութեան: Ինչո՞ւ, որովհետեւ գերմարդկային մտայղացումը կամ արդիւնաբերութիւնը կարիքը ունի նաեւ գերմարդկային արտաֆին օժանդակութեան:

Համայն տիեզերֆ՝ ներշնչարանը եղած է մարդուն, անոր մշակոյթին և ֆաղաֆակրթութեան: Անապատն ու անոր կախարդական մայրամուտը և փոթորիկին ձայնալիֆները ներշնչած են մեծ մարգարէները: Բնութիւնն ու անտառները կը ներշնչեն մեզ, յոյս, ներգօրութիւն, պայծառ պապգայ և հաւատֆ: Այն ներշնչումը, որուն մասին երգած ու ճարած են անցեալի իմաստասէրներն ու բանաստեղծները, կու գայ մեզի հոգիի անծանօթ ալիֆներէն, գոր կարգ մը մարդիկ, կ'անուանեն հաւատֆ կամ ներշնչում:

Բնութիւնն ու Աստուածաշունչ մատենը՝ աստուածայայտնութեան ցղացումներն են, իսկ Աստուած՝ Ակնադբիւրն է ներշնչման: Աստուծոյ ներգործութիւնը այնքան հարուստ է, որ կարելի չէ սահմանափակել զայն մէկ յայտնութեամբ: Հոգեկանի գերակայութիւնը և ներգործօն միջամտութիւնը (տիրակալութիւնը) կեանֆի երեւոյթներուն վրայ անհերֆելի դրոշմը ֆանդակած է: Կոյր Հոմերոս, Միլթրն և Հէլէն Բելլըր (կոյր և խուլ) ներշնչուած՝ պատմական անկիւնադարձ կերտող տիտաններ դարձան:

Մարդ արարածը ենթակայ է թէ՛ բարիի և թէ՛ չարի ներշնչումներուն: Տարուցեալ Յիսուս լուսեղէն և ձայնեղէն հօգօր ներգործութեամբ, երկինֆէն, հանդիպեցաւ Սօղոսին Դամակոսի մուտֆին և կերպարանափոխեց անոր ընթացքը դէպի բարին: Սօղոս դարձաւ Պօղոս առաֆեալ: Ան նախապէս իր ներշնչումները ստացած էր չարին ներազդեցութեամբ, ուստի կը գրէ Թեսաղոնիկեցւոյ եկեղեցիին, ըսելով.

«Չարին գալուստը Մատանային ներգործութեամբ է՝ ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբէութեան զօրաւոր գործերով և անիրաւութեան բոլոր պատրանֆներով՝ կորստեան մատնուածներուն հանդէպ. և այդ ամէնը այն բանին փոխարէն, որ անոնֆ չընդունեցին Ճշմարտութեան սէրը, որպէսզի փրկուին: Ասոր համար ալ Աստուած անոնց պիտի որկէ մոլորութեան զօրութիւնը, որպէսզի անոնֆ հաւատան սուտին, և դատապարտուին»--Բ. Թեսաղ. Բ. 3-7:

Աշխարհի ներկայ ապամարդկային կենցաղավարութիւնը, նիւթապաշտ և անասուած հոգեբաններ, կրնան վերագրել, անգործութեան, ուստիկանական թոյլատուութեան կամ ընտանեկան խանգարումի: Մակայն այս բոլոր խանգարումներու և սանձարձակութիւններու արմատը՝ չարին ներգործութիւններն են: Որովհետեւ չարին ներգործութիւնները, թոյլատուութիւնն է, անօրէնութիւն և վայրէջք, որ ենթական կը տանի մահուան:

Աստուածաշունչ մատեանը կանգնած է խոովայոյզ դարերու հոլովոյթին դիմաց և ցոյց կու տայ բեզի և ինծի հոգեկանի գործօն գերակայութիւնը և Աստուծոյ ճշմարիտ և իրաւ միջամտութիւնը մեզմէ իւրաքանչիւրի կեանքին մէջ: Ուստի հրաւիրենք զԱյն ներշնչելու, ողորդելու և շարժելու մեզ ալ, Իր Միածին Որդւոյն փրկչական ներգործութեամբ: Բանա՛նք մեր հոգիները, նուիրե՛նք մեր կամքը գործադրելու Անոր բարեգութու սրբաբար Կամքը: Այն ատեն մեր մարմնական կաւին մէջ պիտի զգանք աստուածային ներգործութիւնը և ներշնչումը: Ոչ թէ փարիսեցիական բարեպաշտական ցուցամոլութեամբ, այլ գոհողութեան, նուիրումի և ներողամտութեան հոգիով: Ներել ո՛չ միայն *գաղափար*, մը ըլլալու է, այլ *իրականութիւն* մը: Այն ատեն միայն հաւատացեալները, անայլայլ միացումով ներդաշնակուած պիտի ըլլան թէ՛ իրարո՛ւ և թէ՛ Յիսուս Զրիստոսի հետ:

Ի՞նչ կը կարծուի ըլլալ, մեզ սիրող Փրկչին, վերջնական իղձը Իր առաքելութեան մասին: Կարդանք Իր աղօթքը առ Հայր Աստուած, միասին.

**«Կ՛աղաչեմ...բոլոր ինծի հաւատացողներուն համար, որպէսզի ամէնքը մէկ ըլլան, ինչպէս դուն Հա՛յր, իմ մէջս, և ես՝ բու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջը ըլլան, և որպէսզի աշխարհն ալ հաւատայ թէ դո՛ւն զրկեցիր զիս»--Յով. ԺԷ. 20-21:**

Աստուած ներթափանցելով և ներխուժելով մարդկային կեանքէն ներս կը կերպարանափոխէ և կը մղէ մարդը դէպի բարին ու ճշմարիտը, դէպի Յիսուսի Մարդեղութիւնը՝ աստուածանմանութիւն: Ստեղծագործութեան գագաթնակէտը, որ ուրուագծուած էր Արարչին **"Խորհուրդ Խորհիսին"** մէջ:

Հոգեկան աշխարհի մէջ կան ապրումներ և ըմբռնումներ, որոնք մեր հինգ զգայարաններով հասկնալի չեն, ասոնք կը կոչուին ներհայեցողական և հոգետեսական կարողութիւններ: Աղօթքի պահը և սրբութեան վարժութիւնը (հոգեկան կարգապահութիւն) կ'առաջնորդեն հաւատացեալը դէպի երկնազգաց ներհայեցողութիւն: Ներհմտական գիտակցութիւն և ներհայեցողական վարժութիւն: Որպէս մտքի հնարագիտութիւն և անձնական հետաքրքրութիւն գոհացնելու ծառայելու չեն ասոնք: Անձնասիրութեան և փառամոլութեան համար եղած ներհայեցողութիւնն ու աստուածային գիտութեան թափանցումը առանց անձնական կամքի *նուիրումի* և *սրբ-*

*քութեան զոմողութեան, գիտութեան լոյսով խաւար ներմուծել է հոգիներէն ներս: Այս մասին աւելի մանրամասնութիւն փափափողներուն համար, կարդալ Միմոն մոգը՝ Գործք Առաք. Ը. 10-25 համարները:*

Յիսուս Զրիստոսի Աւետարանը մեզի ցոյց կու տայ երկու առարկայական դէպք իրողութիւններ, ոչ առակներ: Մին, Մարիամ Մագդաղենացին և միւսը Ջակֆեոս մաքսապետը: Ասոնց իւրաքանչիւրին ըրած զոմողութիւնը, գիջումը, գղջումը, ապաշխարանքը և իրենց հոգիներուն մաքրագտումը մանրամասնօրէն գրուած է Ս. Աւետարաններուն մէջ. (Ղուկ. Է. 36-50, Ը.2, Մարկ. ԺԶ.9: Ղուկ. ԺԹ.2, 5, 8-10): Այս երկու սուրբերը հոգեկան և մարմնական փրկութիւն չստացան *միայն* բերանացի խոստովանութեամբ մը, այլ հոգեկան և առարկայական զոմողութիւններով: Հոգեկան ներմղումի զարթնումը միայն *պիթննայ* մը ըլլալ չէ՛, այլ *հետանա՛լ* մեղքէն ու *կանգնի՛լ* արդարութեան, իրաւունքի և սրբութեան համար: Առանց իրական գղջումի՝ ապաշխարանքի դառն արցունքներու, ներքին մարդու կերպարանափոխութիւնն ու հոգեմտրոգութիւնը *“Վերստին Մնաւոր”* չ’անուանուիր: Առանց ցաւի և երկունքի ծնունդ գոյութիւն չ’ունենար: Բերանացի բանի մը բառեր փոխ առնելով Աւետարանէն ու զանոնք կրկնելով, մարդ *“Վերստին ծնած եմ”* չի՛ կրնար ըսել:

Մարիամ Մագդաղենացին իր հմայիչ գեղեցկութեան և սլացիկ հասակին համար չ’արժանացաւ տեսնել Յարկական Յարուցեալը, այլ իր նուիրումի՛ն, սրբութեա՛ն և սիրոյն համար:

Հայ Ոսկեդարու ռահվիրա Մեսրոպ Մաշտոցի բանաստեղծութիւնները խորապէս բնարական են և կը կրեն հեղինակին խո՛ր ներշնչումներուն կնիքը: Անոր ներշնչումը՝ խորհրդածական և ներհայեցողական իմաստութիւնը մուսայէն չէ՛, հեթանոս *“անծանօթ աստուածներէն”* չէ՛ որ կու գայ, այլ ա՛յն հաղորդութենէն ու յարաբերութենէն, որ ան մշակած էր երկար տարիներ աղօթելով, ծովապահութեամբ և ինքնաբնութեամբ--ո՛չ ուրիշները բննադատելով--այն Աստուծոյն հետ, որ յայտնուեցաւ Յիսուս Զրիստոսի Մարդեղութեամբ՝ ջօջափելի և տեսանելի ապրումով, սպասարկութեամբ, բարեգթութեամբ, ողորմածութեամբ, մարդկային ցաւին բաժնեկցելով, սիրով ու գերագոյն նուիրումով՝ *Խաչելութեամբ*:

\*\*\*\*\*

Տիեզերքի և կեանքի վրայ նայելու չէ որպէս *պատահականութիւն* մը, այլ՝ Աստուծոյ էութեան և կենդանութեան յայտարարը, այսինքն՝ Ինքնաբացայտումը: Աստուածաշունչ մատնանը կը պարունակէ *գերագոյն սիրոյ*, և *ինքնանուիրումի* արտայայտութիւնը:

Զրիստոնեաներու համար *“Յայտնութիւն”ը Անձնաւորութիւն* մըն է՝ *Մարդեղացեայ Յիսուս Զրիստոս*, իսկ իսլամներուն համար՝ յայտնութիւնը *գիրք* մըն է՝ Գուր’անը:

Յայտնութիւն բառին իմաստը հայերէն լեզուի մէջ կը նշանակէ

գաղտնիքի մը, ծածկուած խորհուրդի մը, կամ վարագոյրի մը անհետացումը և թափուկ կարծուած խորհուրդին կամ գրութեան առարկայական երեւումը, բացատրութիւնը և մեկնութիւնը:

Ազգային մեծ մարդիկ իրենց բարեպաշտութիւնը կը յայտնեն բարեգործութիւններով, նուիրատուութիւններով, դպրոցներ, եկեղեցիներ և հիւանդանոցներ կառուցանելով:

Աստուած բացայայտած է Իր Իսկութիւնը, Բներեւոյթը և Ներկայութիւնը մարդ արարածին, Իր Անձին իմաստաւորիչ իրագործումներով: Աստուածաշունչ մատանին մէջ կը տեսնենք Աստուծոյ Ինքնաբացայայտումը, որպէս պատմական և առարկայական դէպք՝ Յիսուս Զրիստոսի Ս. Ծնունդին, Անոր ապրումին, Խաչելութեան և լուսածածանչ Յարութեան ջօջափելի և տեսանելի իրողութեան մէջ: Նոր Կտակարանի պատմա-յայտարարութեամբ, Արարիչ Աստուած կը դարդի **վախազդեցիկ** Ձօրութիւն մը և *կոչ* ներգործութիւն մը ըլլալէ ու կը դառնայ վեհափառօրէն սիրոյ, ողորմութեան ու թողութեան **Հայրութիւնը**:

Աստուածահրաշ ներշնչումը տեւականօրէն պատրաստ է օգնել մարդ արարածին: Հաւատացեալէն խնդրուածը՝ սերտել է Աւետարանը և աղօթել հաւատով և վստահութեամբ: Բեթղեհեմի Աստղին լոյսը, որ առաջնորդեց Արեւելի Մոգերը իրաւամբ և ներթափանցումով, պիտի առաջնորդէ նաեւ հաւատացեալը ճշմարիտ Աստուածայայտնութեան: Ներկայ ներշնչումի և յայտնութեան լիազօր ներկայացուցիչը Յարուցեալ Յիսուս Զրիստոս Ի՛նքն է: Ան ըսաւ Իրեն հաւատացողներուն.

**«Ահաւասիկ ես ձեզի հետ եմ բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանը»--Մատթ. ԻԸ: 20:**

Եկեղեցին (հաւատացեալներու միասնականութիւնը) Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն ու հաղորդակցութիւնն է սիրայորդ յարաբերութեամբ: Յիսուս Զրիստոսի անձնաւորութեան և սիրոյն միասիկ ներկայութիւնը, ծովածաւալ հաւատացեալներու մէջ, Աստուածաշունչի կենդանի վկայութիւնն է: Մեր Տիրոջ անտեսանելի, բայց իրա՛ւ ներկայութիւնը՝ ծառայութիւն և նուիրում, գործնական և յորդուն ու ճառագայթող ապացոյցն է Աւետարանի ճշմարտութեան: Յիսուս Զրիստոսի յաղթական Յարութեան անկորնչելի ներկայութիւնը երգ ու հրճուանք է հաւատացեալներուն, իսկ խղճահարութիւն՝ մեղաւորներուն: Թափուր գերեզմանը ու յաղթական Յարուցեալի ներկան դարդած են անցաւոր ըլլալէ հաւատացեալին համար: Այս յոյսով ննջեցին մեր նահատակները, ու փակեցին մեր պապերը իրենց աչքերը:

Ինչո՞ւ կան զանազան Աւետարաններ և բազմազան նկարագրութիւններ նոյն Յիսուս Զրիստոսի:

Մակերեսային ընթերցողի մը, խորանալու ժամանակ չունեցող արդի

Բննադատի մը և խորհրդագագայնութիւն չունեցող ու գրիչ շարժող հետաքրքրի մը համար, վերի նախադասութիւնը իրաւացի "կ'երեւի":

Երբ սերտեմք նոր կտակարանը իր ամբողջութեամբ ու նաեւ եկեղեցական Պատմութիւնը իր նուիրեալ նահատակներով և մարտիրոսներով, անոնց անյողդողդ հաւատքը և կենդանի վկայութիւնը ի վերջոյ *պիտի* մղէ ու շարժէ մեզ հաւատալու, թէ կայ միայն մէկ Աւետարան և թէ մէկ Յիսուս Զրիստոսի մէջ կը նոյնանան բոլոր յիշուած գանազան նկարագրութիւնները:

Այլ խօսքով: Աստուծոյ ներգործութիւնը, իր ծառաներուն և առաքեալներուն միջնորդութեամբ, այնքա՛ն հարուստ է, որ կարելի չէ սահմանափակել "Աստուածայայտնութիւն"ը մէ՛կ յայտնութեամբ:

Աւետարանագիր սուրբեր անկեղծօրէն, համեստօրէն և առարկայականօրէն ջանացած են պատկերել ա՛յն ինչ որ Լուսահանդերձ, նազովրեցի ներգործած է իրենց *անձի՛ն* և *կեանքի՛ն* վրայ:

Մարդ արարածը նման օթոյի, մեքենական *միոթինակ* արտադրութիւն մը չէ, գանգուածային արդիւնաբերութիւն մը չէ (mass production): Մարդ՝ իւրայատուկ և ինքնատիպ մանրանկարն է տիեզերքի մը: Պէթովէնի և Մոցարդի մահուանէ ի վեր, հազարաւոր երաժիշտներ կը ջանան նուագել ու մեկնաբանել աշխարհահռչակ երաժշտագէտները: Միթէ ներկայ երաժիշտները, իրենց երաժշտական *զանազան* մեկնաբանութեամբ կ'աղօտե՞ն, կը կեղծե՞ն կամ կը խոռվե՞ն ու կը գայթակղեցնե՞ն երաժշտագէտ տիտան բանաստեղծները: Ո՛չ երբեք, այլ կը հարստացնեն ու կը գունաւորեն անոնց հրաշագեղ մտայղացումները և մատչելի կը դարձնեն գանոնք հասարակութեան:

Երկնաճաճանչ Յիսուս Զրիստոս "իր" մը կամ առարկայ մը չէ՛ որ սահմանուած երատարած *մէկ* բացատրութեամբ ըմբռնելի դառնայ: Յիսուս Զրիստոս Աստուծոյ Մարդեղութի՛ւնն է, որ Իր կարգին կը ջանայ բացատրել "Խորհուրդ Խորին"ը հողաջէն մարդու: Մենք երկու հազար տարիներ յետոյ կը ջանանք ըմբռնել վերոյիշեալ սրբազան խորհուրդը այբբենագիմի տառերով գրուած Աստուածաշունչ Մատեանէն: Ընթերցողը թող ջանայ հասկնալ, որ մակերեսային մօտեցումով որքա՛ն դժուար է բննադատել սոյն նուիրական Ա. Գիրքը, որուն նկարագրած Աստուածը հասկնալի կը մնայ մահկանացու մարդուն մի միայն հաւատքով, նուիրումով ու ծնրադիր երկրպագութեամբ այնպէս ինչպէս Արեւելի Մոգերը, որ նուիրեցին իրենք գիրենք Մանուկ Յիսուսին և ինչ որ ունէին, որովհետեւ ամիսներով ու երկարատեւ ուղեւորութենէ վերջ անոնք գտած էին իրենց որոնումի բարձրագոյն գագաթը՝

**Ճշմարիտ Աստուածայայտնութիւնը:**

**Ապրիլ 26, 1994 Թորոնթօ**

# ՅԱԻԵԼԵԱԼ ՀԱՄԵՍՏ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԶՈՒՍՊ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Առաքելաբանական դարաշրջանին հանճարի հիմնական գիծը ոգեշնչում կամ աստուածային ներշնչանք կը համարուէր: Աստուած թոյլէ՞ ու ներշնչանք բաշխած է մարդկութեան: Ո՛չ միայն հրեայ ազգին, այլ բոլո՛ր Իր ուզած ծառաներուն: Բաղձամ մարգարէն, Հին Կտ.-ին մէջ, Հրեայ ժողովուրդին չէր պատկաներ: Նոյնպէս՝ Յոբ Երանելին: Ան ազգութեամբ սառուցի արաբ մըն էր, որ կը կարծուի ապրած ըլլալ Աբրահամի և Մովսէս մարգարէին միջեւ:

Ներշնչում և յայտնատեսութիւն ունենալ *անոյնպէս* ըլլալ չի՛ նշանակեր...: Մի միայն Տէր Աստուած անսխալական կը ճանչցուի: Ներշնչուիլ և յայտնատեսութիւն ունենալ, աստուածային **պարգեւ** մըն է: Աստուծոյ Կամբը հասկնալ, *երկրորդակա՛ն* պարգեւ մըն է: Ներշնչում ունենալ և Սուրբ Հոգիով խօսիլ, Աստուծոյ Կամբը ըմբռնել չէ՛, այլ պարգեւ մը *ստանալ* է:

Հաւատացեալ մը զգուշանալու է ըսել. «Ես յայտնութիւն մը ստացած եմ Աստուծմէ, և այս բանը *այսպէ՛ն* է»: Թէեւ Աստուծոյ յայտնութիւնը վսեմ մեծարանքի աժանի է, սակայն զայն ըմբռնելը և անոր թափանցելը նոյնքան կարեւոր և պարտաւորիչ է: Ինչպէս որ զաւակ մը իր հօր ժառանգութիւնը կրնայ մսխել, նոյնպէս ալ քրիստոնէայ մը կրնայ իր կարծեցեալ ներշնչումով իր կոչումն ու ծառայութիւնը վատնել ու կործանել:

Համեստ կեանքիս ընթացքին ականատես եղած եմ ոչ շատ, սակայն կարգ մը անձերու, որոնք իրենց կոչումն ու կեանքը խորտակեցին, իրենց կարծեցեալ յայտնատեսութիւններուն պատճառաւ: Ասոնցմէ մին Գանատացի Պատուելի մը՝ United Church of Canada-ի որ ինձի շատ մօտ բարեկամ մըն էր և ուրիշներ:

Վերեւ յիշուած պարզ խորհրդածութիւններու պատճառները, հետեւեալներն են:

1. Պետրոս աջակերտ, Հոգեկան յայտնատեսութեամբ պատասխանեց Յիսուս Վարդապետին հարցումին և ըսաւ. *«Ինչ է Զրիստոսն ես՝ կենդանի Աստուծոյ Տիրոջն»* --Մատթ. ԺԶ16: Պետրոս՝ իր ներշնչումի ամբողջակա՛ն զօրութեամբ, չէր հասկցած իր խօսած բառերուն իմաստն ու նշանակութիւնը...: Ան իր անչափահաս ըմբռնումով ջանաց իր Վարդապետը շեղել ու վրիպեցնել Անոր երկնային առաքելութենէն, և Յիսուս Պետրոսը կոչեց. *«Մատանայ»*: Ա՛ն որուն պիտի յանձնուէր արեւոյնութեան բանալիները...: Զի՛ բաւեր ունենալ ներշնչում և յայտնատեսութիւն: Պարտ ենք ունենալ հոգեկան գիտութիւն և փորձարական չափահասութիւն:

Աջակերտները ունեցան բացարկիկ կենդանի՝ վարժութիւն և հմտութիւն Պայծառակերպութեան լերան վրայ: Լսեցին երկնային Պատգամը. «*Մտփիլա՛ է իմ սիրելի Սրբիս, որուն հաճեցայ. Աստ՛ր մտփիկ քրէ՛ն*»--Ժէ 6: Մօտ երե՛ք տարի ապրեցան Յիսուսի միաբանութեան մէջ: Ունկնդրեցին Յիսուսի Բարոզները, պատգամները, ապագայի նախատեսութիւնները, ականատես եղան աննախընթաց հրաշքներու, Յիսուսի Ա. Խաչելութեան, հրաշափառ Յարութեան և Անոր ընկերութեան ու Աստուծոյ Թագաւորութեան սուած դաստիարակութեան: Համբառնալէ Բիջ առաջ, աջակերտները հարցուցին Յիսուսի, ըսելով. «Տէ՛ր, այս ժամանակի՞ս մէջ պիտի վերահաստատես Իսրայէլի Թագաւորութիւնը»--Գործք Ա. 6:

Համեստ և արդար ըլլալու համար, չունիմ բանաձեւ ( formula) կամ նշանացոյց, թէ ինչպէ՞ս կարելի է ճանչնալ Ամենակալին հաճութիւնը: Իմ միակ գիտցածս և համեստ կարծիքս է, թէ երբ հաւատացեալ մը ունենայ ներշնչում և աստուածային յայտնատեսութիւն, և պատճառ և համբերելու է ճանչնալու և հասկնալու համար թէ ի՞նչ էր, և ինչո՞ւ համար ստացաւ սոյն ներշնչումը: Առանց ինքն իրմէ Բայլ մը իսկ առնելու, աղօթելու է, որ Աստուած Ի՛նք յայտնէ ստացուած յայտնատեսութեան բացատրութիւնը և պատասխանը: Չափազանց դժուար է ճանչնալ Աստուծոյ կամքը թէ՛ մեր գնացքին՝ ապրումին, ու թէ՛ Իր ծրագրային նպատակները ճանչնալու: Պատճա՞ռը:

Որովհետեւ Աստուծոյ ծրագրային նպատակները Անոր Խորհրդածութիւններն են: Նոր Կտակարանին մէջ այս բառը ընդհանրապէս կը նշէ աշխարհի փրկութեան համար Աստուծոյ ծրագիրը, որ նախապէս ծածկուած էր, չէր յայտնուած մարդոց, սակայն Քրիստոսով և Ա. Հոգիին միջոցաւ յայտնուեցաւ--Հռոմ. ԺԶ. 25-26: Կոր. Ա. 26-27: Խորհուրդ բառը թարգմանութիւնն է Յուն. *mysterion* բառին, որ կը նշանակէ ծածկուած կամ թափնուած բան: Լատին եկեղեցին զայն կ'արտայայտէ *sacramentum* բառով, որ կը նշանակէ սրբագործում և նուիրականացում:

Խորհուրդը ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի է հոգեւոր աչքով՝ հաւատով և իմացումով: «Փրկութեան այն ծրագիրը որ Աստուած անցեալ բոլոր դարերուն մարդկութեան բոլոր սերունդներէն ծածուկ պահած էր, և որ հիմա յայտնեց իր ընտրեալներուն»: Այն ինչ որ հեթանոսներ փնտռեցին իրենց ոլորապտոյտ պարերու և թափնագիտական արարողութիւններու մէջ, Աստուած բացայայտեց Քրիստոս Յիսուսով զինք *անձ նանու է՛ր* սիրողներուն: Աջակերտներու Ոտնուան՝ գործադրուած *տակ*, և կատարուած *խորհուրդ* մըն էր: Ա՛յն պահուն երբ Որդին խոնարհեցաւ ու լուաց աջակերտներուն ոտները, անոնք թէ՛ ականատես եղան և թէ՛ չհասկցան: Կը տեսնե՞ք մարդ արարածին տկարութիւնն ու անճարակութիւնը: Մոյն պատճառաւ, Յիսուս ըսաւ.

**«Ինչ որ կ'ընեն՝ դու ն հիմա չես հասկնար,  
բայց յետոյ պիտի հասկնաս»--Յով. ԺԳ.7:**

Յետոյ, մենք որ Զինք կը դաւանինք, հաւատարմութիւն ուխտած ենք Իրեն, որքա՞ն անձնուէր ենք և որքա՞ն վստահելի: Աստուած կրնա՞յ վստահիլ Իր գաղտնիքները մեզի: Աշակերտները ընտրուած ու կանչուած էին: Մին մասնեց իր Տէրը, երկրորդ մը ուրացաւ իր Վարդապետը և մնացեալները փախան...: Միայն կիները, որոնք սիրած էին Յիսուսը անո՞նք անվախօրէն կանգնեցան Խաչեցեալին շուրջը: Այր մարդոց կողմէ ստորադասուած կիները...:

Եթէ կ'ուզենք ճանչնալ ու հասկնալ մեր ունեցած ներշնչման իմաստը, ցոյց տալու ենք Աստուծոյ մեր հաւատարմութիւնն ու վստահելիութիւնը և սէրը, ո՛չ միայն ազատութեան մէջ, այլ հալածանքներու և նաեւ տառապանքներու մէջ:

Պօղոս առաքեալ, Եկեղեցւոյ հաւատացեալներուն կը գրէ հետեւեալը.

*«Կաղօթեմ, որ Աստուած ձեր մտքի աչքերը լուսաւորէ,  
որպէսզի գիտնամ՝ թէ ի՞նչ է այն յոյսը որուն հրաւիրեց  
ձեզ, և ի՞նչ ճոխ ու փառասոր է խոստումը՝ որ իր  
ընտրեալները պիտի ժառանգեն, և ի՞նչ գերազանց ու  
մեծ է այն ոյժը, կարողութիւնն ու զօրութիւնը, որ կը և  
երգործէ հաւատացեալներու մէջ»--Եփես. Ա.18-19:*

*«Այդ ծրագիրը Աստուած չյայտնեց մարդկութեան նախորդ  
սերու նշներու և այնպէս՝ ինչպէս հիմա Մաւր Էոզիին միջոցաւ  
յայտնեց իր սուրբ առաքեալներու և մարգարէներու նա»--Եփես. Գ.5:*

**«Քրիստոսի մէջ ծածկուած կը գտնուի  
Աստուծոյ իմաստութեան ու գիտութեան  
ամբողջ գանձարանը»--Կող. Բ.2-3:**

Ուստի ուսումնասիրե՛նք Աւետարանները երկրպագակա՛ն հոգիով:

**Նոյեմբեր 21, 1997  
Թորոնթօ**

## Ն Ո Ր Զ Ի Ն Ա Ն Շ Ա Ն

Ի՞նչ Հայաստան մը կարելի՞  
Առանց Անոր՝ որ Հաստիչն է  
Ամէն գոյի և անգոյի,  
Ամէն մարմնի և հոգիի...  
Վերադարձի՛ր, երկի՛ր իմ հին,  
Զու Աստուածի՛ն,  
Հի՛ն հաւատփին...

Վերադարձի՛ր  
Զու պապերուդ նոյն Աստուածին,  
Որ անհունէն աստեղածին,  
Իր երկինսէն ծնաւ Բեգի  
Սուրբե՛ր նման Լուսաւորչի  
Ու հանճարներ մեսրոպափայլ  
Մարտիրոսներ վարդանազել,  
Նահատակներ ապրիլաբոյր:

Որ Բեգ տուաւ  
Աստուածաջո՛ւնչ անգերազանց  
Ու Ոսկեդար Հայաստանեայց  
Ու Նարեկներ հազարազանձ:

Որ Բեգ կրեց, քերաւ, հասցուց  
Այս օրերուն՝  
Զեզ Իր Աջովն անցընելով  
Խաւարներէ ու դարերէ,  
Աւարայրէ ու Տէր-Չօրէ  
Դժոխագոյն,  
Բերաւ հասցուց  
Նաւահանգիստն այս օրերուն:

--ժագ Ա. Յակոբեան